ձիօսին նվիրված էր օձը՝ վիշապը ստորերկրյա, անդրաշխարհային, մեռյալների աշխարհի կենդանի՝ animal chthonien։ Թվում է, թե Վահագնի երկրորդ անունը եղել է պարզորեն Ատված, համապատասխան Սաբաձիօս-Ատտիսին։

Հայկական ժողովրդական տոները բացատրելիս մեզ թվում է, թե ավելի հիմնավորված պիտի համարվեն նրանց հետ զուգորդված սովորությունների այն մեկնաբանությունները, որոնց հիմք է ծառայում ոչ թե պարսկական-զրադաշտական, դուալիստական մտածողությունը, այլ փոքրասիական մեռնող և հարություն առնող բնության պաշտամունքից բխող աշխարհըմբռնումը[8]։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՆԵՐ[9]

Նոր տարի։ Զանգեզուրի հայը Նոր տարին սկսում էր ոչ թե հունվարի մեկին, քաղաքացիական Նոր տարու հետ, որը նա ոչ մի բանով չէր նշում, դա նույնիսկ պաս օր էր, այլ Նավասարդի տոնով, որը սովորաբար կատարում էր նոյեմբերի կեսերին, 10—20-ը կիրակի օրը, Նախարաթոդին։ Այդպես էր և Լեռնային Ղարաբաղում, Մեղրիում, Ագուլիսում և մեր ունեցած տեղեկություններին նայելով, մինչև Սալմաստ, որտեղ տոնվում էր նոյեմբերի 13-ին մոտ, գուցե նաև համատարածաբար մինչև Ալաշկերտ, որտեղ նույնպես այդ ամսին էր սկսվում Նոր տարին։ Հնում Նավասարդը տոնվում էր օգոստոսի 11—սեպտեմբերի 9-ը։ Հայաբնակ արևմտյան վայրերում Նավասարդի տոնակատարությունն անծանոթ էր։ Այնտեղ Կաղանդն էր տոնվում հունվարի մեկին իր հատուկ սովորություններով։ Զանգեզուրում նախարապանը և առհասարակ տանու ծառայողները վարձվում էին մինչև այդ օրը։ Նախարապանն այդ օրն անպատճառ պիտի իր տանը մնար և հագներ իր ամենամաքուր շորերը։ Մյուս տոներին նա կարող էր նաև դուրսը, դաշտում մնալ։ Դրանով շեշտվում էր, որ նրա աշխատանքների մի շրջանը վերջացած էր։ Նույնպես այդ օրը վերջ էր դրվում բոլոր անձնական խռովություններին։ Իրար հետ խռովածներին հաշտեցնում էին և նրանց մեջ եղած դժգոհությունների բոլոր առիթները համարվում էին վերացած։ Այսպիսով՝ Նոր տարին պիտի սկսվեր ընդհանուր հաշտությամբ և հին հաշիվների վերացմամբ, որով ապահովվեր խաղաղություն ամբողջ Նոր տարվա համար։

Բնորոշ է, որ Նավասարդ բառը ըստ լեզվագետների բացատրության, ունի իրանական ծագում։ Նրանք[10] այդ բառը համարում են հոմանիշ navasārd բառին, որը կազմված է nava-նոր (զենդ.) և sārd-տարի արմատներից։

---

[8] Այս տողերը արդեն գրված էին, երբ հնարավորություն ունեցա ծանոթանալու «Հայրենիք» ամսագրի, Բոստոն, 1925—26, № 1 և հաջորդ համարներում Նիկ. Ադոնցի լույս ընծայած հոդվածաշարի հետ՝ «Հին Հայաստանի աշխարհայացքը» վերնագրի տակ։ Հեղինակը մատնանշում է Ատտիս-Կիբելայի պաշտամունքի առկայությունը հայկական հեթանոսական հավատալիքների մեջ, հաստատելով իր միտքը մանավանդ Արայի և Շամիրամի առասպելի վերլուծումով։ Ն. Ադոնցը սպասում է նաև իր՝ «Եկեղեցու սուրբերն ու եկեղեցական տօները» պատրաստի աշխատության տպագրության։ Ինձ հայտնի չէ՝ արդյոք նրա այս վերջին հետազոտությունը որևէ տեղ լույս է տեսել։ Ակադեմիկոս Գր. Ղափանցյանն էլ՝ Ն. Ադոնցից անկախ զբաղվելով Արայի և Շամիրամի առասպելի վերլուծումով՝ համեմատում է այդ առասպելը Թամուզի պաշտամունքի հետ, որը նույնպես շաղկապված է մեռնող և հարություն առնող աստվածների մասին Միջագետքում տարածված ավանդությունների հետ։

[9] Հմմտ. Լալայեան Ե., Սիսիան, էջ 149—160, Զանգեզուր, էջ 106—112։

[10] Հ. Աճառեան, Հայերէն արմատ. բառ., հ. V, էջ 66։